ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ

(աղբիւրագիտական ուսումնասիրութիւն)

ՏՈՐՔ ԴԱԼԱԼԵԱՆ (torqdal@yahoo.com)

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայ բանահիւսական մի շարք պատումներում, որոնց գրի առնուած տարբերակները յայտնի են Ժ. դարից, իբրեւ գլխաւոր հերոս հանդէս է գալիս Ը. դարի հայրապետ Յովհան(նէս) Իմաստասէր Օձնեցին (717-728):

Գիտական ուսումնասիրութիւններում Օձնեցու բանահիւսական կերպարին առաջին անգամ հանգամանօրէն անդրադարձել է ազգագրագէտ Երուանդ Լալայեանը, որը դաշտային բանահիւսական նիւթեր է գրառել հենց Օձնեցու ծննդավայրում՝ Լօռիում[1]: Լալայեանից յետոյ՝ խորհրդային շրջանում, Լօռիին վերաբերող ընդհանուր բանահիւսական ժողովածուում բանագէտ Թամար Գէորգեանը բերել է Օձնեցուն վերաբերող պատումների նոր տարբերակներ[2], որոնք, ամէնայն հաւանականութեամբ, հիմնականում ազդուած են Լալայեանի տարբերակներից: Օձնեցու բանահիւսական կերպարն առանձին հրապարակումներով վերլուծել են Աստղիկ Իսրայէլեանը, Լիլիթ Սիմոնեանը եւ ուրիշներ[3]:

Իրական պատմական անձանց բանահիւսական կերպարն ձեւաւորւում է դիցաբանական եւ վիպաբանական կանոնների համաձայն, սակայն հիմքում բնականաբար ընկած է լինում տուեալ գործչի ապրած կեանքը: Օձնեցու կեանքին եւ գործունէութեանը մենագրութիւն է նուիրել Մհեր Պապեա-

---

[1] Ե.Ա. Լալայեան, *Բորչալուի գաւառ*, Թիֆլիս, 1903:

[2] Թ. Գէորգեան, «Լօռի (Տաշիրք-Զորագետ)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտր. 20*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», Երեւան, 1999:

[3] Ա. Իսրայէլեան, «Ս. Յովհաննէս Օձնեցին ժողովրդական աւանդութեան մէջ»՝ *Հայոց սրբերը եւ սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը*, խմբ.՝ Ս.Բ. Յարութիւնեան, Ա.Ա. Քալանթարեան, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, «Հայաստան», Երեւան, 2001, էջ 71-78. նաեւ՝ Л.Д. Симонян, “Народный культ Ованеса Одзунского” (Յովհաննէս Օձնեցու ժողովրդական պաշտամունքը) *Страны и народы Востока, вып. XXXVI. Религии на Востоке* (под ред. И.Ф. Поповой, Т.Д. Скрынниковой), РАН, Институт восточных рукописей, Восточная комиссия Русского географического общества, «Москва - Восточная литература», Մոսկուա, 2015, էջ 362-77. նաեւ՝ Տ. Դալալեան, «Յովհան Օձնեցու վիպական կերպարի համեմատական քննութիւն», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2(659):2020, էջ 306-23:

նը[4], որի տուեալները նոյնպէս կարեւոր են՝ Օձնեցու վիպական կերպարի համեմատական քննութիւնը կատարելիս:

Օձնեցու երկերի նոր հրատարակութիւնը աշխարհաբարով՝ Վազգէն Համբարձումեանի աշխատասիրութեամբ[5], եւս խթան դարձաւ հայ նշանաւոր կաթողիկոսի հանդէպ գիտական հետաքրքրութեան աճի: Օձնեցու ժամանակին վերաբերող պատմական, դաւանաբանական, աղբիւրագիտական եւ արուեստաբանական հարցերին նուիրուած գիտաժողով տեղի ունեցաւ 2003ին Հաղպատի վանքում, որին ներկայացուած զեկուցումները՝ յօդուածների տեսքով, հրատարակուեցին գիտաժողովի նիւթերի ժողովածուում[6]: Ինչպէս երեւում է, Օձնեցու իրական-պատմական եւ վիպական կերպարների հանդէպ հետաքրքրութիւնը աճել է յատկապէս Հայաստանի Հանրապետութեան 1991ի անկախացումից իվեր, թէեւ նախախորհրդային տարիներին նոյնպէս Օձնեցուն եւ նրա աշխատանքներին բազմաթիւ անդրադարձներ են կատարուել պատմագրական եւ բանասիրական բնոյթի ուսումնասիրութիւններում:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Յովհան Օձնեցու գահակալմանը նախորդող ժամանակաշրջանը բաւական ծանր էր Հայաստանի համար: Երկիրը չունէր ո՛չ թագաւոր, ո՛չ էլ ընդհանուր իշխան: Է. դարի վերջ-Ը. դարի սկզբին արաբական զօրքերը գրաւում են Հայաստանը եւ մայրաքաղաք Դուինը՝ ստեղծելով *Արմինիա* վարչական միաւորը Արաբական Խալիֆայութեան կազմում[7]: Արմինիա ոստիկանութիւնն ընդգրկում էր Հայաստանը, Վիրքը եւ Աղուանքը, իսկ նրա առաջնային քաղաքական դէմք էր ընդունւում հայոց կաթողիկոսը[8]: Ի տարբերութիւն Ասորիքի (Սիրիայի) եւ Եգիպտոսի պատրիարքների՝ հայոց կա-

---

[4] Մ. Պապեան, *Յովհան Իմաստասէր Օձնեցի. կեանքը եւ գործունէութիւնը*, «Ամրոց», Երեւան, 1998:

[5] Յովհաննէս Օձնեցի, *Երկեր*, գրաբարից փոխադրում, առաջաբան եւ ծանօթ.՝ Վազգէն Համբարձումեան, «Անահիտ», Երեւան, 1999:

[6] *Սուրբ Յովհան Օձնեցի հայրապետը եւ իր ժամանակը. 2003 թ. Յունիսի 3-5, Հաղպատի վանք (Գիտաժողովի նիւթեր)*, (հրապարակման պատրաստ.՝ Ազատ Բոզոյեան), Ս. Էջմիածին Ս. Էջմիածին, «Գարեգին Ա.» հայագիտական-աստուածաբանական կենտրոն, 2004:

[7] Ա. Եղիազարեան, «Արաբների կողմից Հայաստանի նուաճման հարցի շուրջ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1(124):2008, էջ 157-164:

[8] А. Тер-Гевондян, *Армения и арабский халифат* (Հայաստանը եւ Արաբական Խալիֆաթը), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1977, էջ 73-74, 79-82. նաեւ՝ Տ. Միքայէլեան, «Յովհաննէս Օձնեցին եւ արաբները (Ը դարի կէսեր)», *Սուրբ Յովհան Օձնեցի,* էջ 27-30:

թողիկոսը նախ եւ առաջ քաղաքական դէմք էր համարւում[9]: Օձնեցի կաթողիկոսին յաջողւում է դաշնակցել մուսուլման արաբների հետ եւ նրանց օգնութեամբ Հայաստանից դուրս մղել քաղկեդոնականութիւնը, որը ջլատում էր Հայ Եկեղեցու միասնութիւնը:

Սոյն յօդուածը վերաբերում է Օձնեցու քաղաքական-վարչական գործունէութեանն առնչուող ընդհանուր տեղեկութիւններին ու պատումներին, որոնք յաճախ ունեն ժողովրդական ակունքներ: Այս պատումներն իրենց դրսեւորումներն են գտել հայ միջնադարեան պատմագիրների երկերում, ինչպէս եւ մերօրեայ աւանդազրոյցներում ու վիպական շարքերում: Առանձին խումբ են կազմում տեղագրական բնոյթի աւանդազրոյցները, որոնց բազմաթիւ տարբերակներ տարածուած են յատկապէս Օձունում եւ նրա շրջակայքում: Վերջիններիս քննութիւնը թողնելով ապագայ մի յօդուածի՝ այստեղ կը կենտրոնանանք առաջին խմբի աւանդազրոյցների եւ դրանցում արտացոլուած պատկերացումների վրայ[10]: Դրանցում հանգուցային դեր ունի Օձնեցու պատմական հանդիպումը Արաբական Տէրութեան խալիֆայի հետ, որը նկարագրւում է վիպական սեռին բնորոշ գծերով՝ Օձնեցու ընդհանրական բանահիւսական կերպարի համապատկերում:

ՕՁՆԵՑՈՒ ԿԵՐՊԱՐՆ ԸՍՏ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ

Յովհան Օձնեցու մասին առաջին մանրամասն տեղեկութիւնները ստանում ենք նրանից շուրջ երկու դար անց *Պատմութիւն հայոց* գրած կաթողիկոս Յովհաննէս Դրասխանակերտցուց[11]: Վերջինս հաղորդում է, որ Եղիա Արճիշեցուց (703-717) յետոյ կաթողիկոս է դարձել Յովհան(նէս) Օձնեցին[12]: Օձնեցին, ըստ ամէնայնի, կաթողիկոսի գահին նստել է արդէն բաւական յառաջացած տարիքում, քանի որ հմուտ ու տեղեակ էր բոլոր «*քերթողական գրուածքներին, խօսքի մասերին ու մասունքներին, ինչպէս նաեւ տեսակների ուսմունքին, արարածների տեսակներին ու տարբերութիւններին մինչեւ անբաժանելին, անտեղեակ չէր նաեւ տարբերութիւնների հանգա-*

---

[9] Ա. Տէրողեւոնդեան, *Արաբական ամիրայութիւնները Բագրատունյաց Հայաստանում*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, էջ 41:

[10] Օձունում եւ ընդհանրապէս Լոռիում եւ այլուր տարածուած տեղագրական աւանդազրոյցներին ու հաւատալիքներին - նաեւ Ի. դարավերջ-ԻԱ. դարասկզբին արձանագրուած - մանրամասնօրէն անդրադառնում է՝ Симонян, էջ 365-68, 370-72:

[11] Ինչ վերաբերում է դրանից վաղ թուագրուող՝ Մովսէս Կաղանկատուացու կարճ տեղեկութեանը, ապա այն զուտ անուանական յիշատակութիւն է ոմն Յովհաննէս Վարդապետի, որին արդի ուսումնասիրողները նոյնացնում են յետագայում կաթողիկոս դարձած Յովհան Օձնեցու հետ (Պապեան, էջ 9):

[12] *Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն հայոց*, աշխատ.՝ Գ.Բ. Թոսունեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1996, էջ 102-4:

մանքներին եւ բաժանելի ու անբաժանելի պարագաներին»: Նա յօրինում էր ճառեր, բանաստեղծութիւններ եւ խրատական գրուածքներ[13]:

Ներքին բարեմասնութիւնների հետ մէկտեղ, պատմագիրները մեծ ուշադրութիւն են դարձնում նաեւ Օձնեցու արտաքին յատկանիշերի գովերգմանը՝ սկսած հենց Դրասխանակերտցուց: Նրա արտաքին նկարագրութեան մէջ զգալի են հրաշագործ տարրերը: Սա ցոյց է տալիս, որ Օձնեցու կեանքից երկու դար անց արդէն իր կերպարը վիպականացուած էր, եւ հնարաւոր է, որ Դրասխանակերտցին օգտուած լինի ժողովրդական բանահիւսական կամ եկեղեցական գրաւոր աղբիւրներից:

Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Օձնեցին իր զգեստի տակից ոչ թէ բրդեայ, այլ այծի մազից գործուած կոպիտ ու անտանելի քուրձ էր հագնում, որը կոչւում էր *ցփսի*: Մինչդեռ դրսից նա զարդարւում էր գունաւոր ընտիր նիւթից պատրաստուած զգեստով: Եւ ոսկին խարտոցով մանրացնելով ու նրա հետ անուշահոտ խունկեր խառնելով՝ փչում էր ալեխառն մօրուքին, որն իջնում էր մինչեւ իր զգեստի գրպանները[14]:

Ամէնայն հաւանականութեամբ, նշուած գծերը միանգամայն իրական են, քանի որ միջնադարում հոգեւոր եւ քաղաքական բարձրաստիճան գործիչների զգեստաւորման յատուկ արարողակարգեր էին ընդունուած: Ժողովրդի մէջ այնքան մեծ ազդեցութիւն էր թողել ոսկեզօծ մօրուքով Օձնեցու վեհատեսիլ արտաքինը[15], որ արդէն իր ողջութեան իրեն վերագրում էին սրբի գերբնական լուսապսակ, ստեղծւում էին հրաշապատում զրոյցներ, որոնք քով-քովի բերուելով՝ կազմում էին Օձնեցուն ձօնուած մի վիպաշար:

Այնուհետեւ, Օձնեցին ինքն էլ, կարծես, հակում ունէր հրաշագեղ տեսարաններ ստեղծելով՝ մարդկանց ենթագիտակցութեան եւ բնազդային զգացումների վրայ խաղալու: Այսպէս, ըստ Դրասխանակերտցու, Օձնեցին տեսողութեան համար հաճելի խտղտանք հաղորդելու համար՝ եկեղեցու անշունչ քարերին պճնաւորում էր գեղեցիկ զարդերով. *«Եւ վասն զի ոչ այնպէս յաներեւութից ոմանց ահից զօրութիւն ընդոսփուցանօղ մարդկան բերցի 'ի վարթարէն 'ի լաւն՝ որպէս յերեւելեացս գերաբուն զարդուց խտղանք, եւ վասն սորին իսկ այսորիկ կլաւ սովորութիւն գեղեցիկ զարդուք պճնազգեստել զանշունչ քարինս եկեղեցւոյ, ապա ո՛րչափ առաւել մարդ քան զքարինս բերէ 'ի զարմացումն զտեսողսն, սակայն այսոքիկ ոչ ամենեցուն՝ այլ նոցա միայն, որոց դատողական հաւատացեալ է գործ»*[16]: Ուրեմն, Աստծուն իրական հաւատացողներն աւելի Օձնեցու վրայ էին ուշադրութիւն դարձնում՝

---

[13] Նոյն, էջ 104-5:

[14] Նոյն, էջ 104:

[15] Ոսկեփայլ մօրուքի մոտիւն իր դրսեւորումն է գտնում նաեւ ուշ բանահիւսական պատումներից մէկում, որտեղ Օձնեցին համբուրում է զինուորների գլուխները, (Քաջբերունի [Գաբրիէլ Տէրյովհաննիսեան], «Ճանապարհորդական նկատողութիւնք», *Փորձ, ազգային եւ գրականական միամսեայ հանդէս*, Ապրիլ 4:1881, էջ 85:

[16] *Յովհաննու Կաթողիկոսի*..., էջ 104:

մարդն էր նրանց զարմացնում, սակայն ոչ բոլորն էին ունակ վեր կանգնելու նիւթական զարդեղէնի յարուցած շքեղութեան փայլից:

Ինչպէս պատմում է Դրասխանակերտցին, Օձնեցուն տեսել էր Վլիթ անունով հայոց մի ոստիկան[17], որը արաբ ամիրապետին պատմել էր Օձնեցու վայելչութեան մասին, եւ ամիրապետը ցանկացել էր տեսնել նրան[18]: Դրանից յետոյ Օձնեցուն մեծ պատուով բերում են արքունական քաղաքը, եւ ամիրապետը նրան պատգամ է յղում, որպէսզի նա զգեստաւորուի սովորական ձեւով, եւ ինքը նրան այդպէս տեսնի: Սակայն Օձնեցին իր բարձրահասակ կերպարանքն է՛լ աւելի փայլուն զգեստներով զարդարելով եւ նոր ճերմակած մօրուքը ոսկէ ծաղիկների փնջի նման կազմելով ու ձեռքն առնելով ոսկենկար գաւազանը, որը եբենոսեայ փայտից էր, «ահա այդպէս,- Դրասխանակերտցու խօսքով,- լաւ գոյն ունեցող ու թիկնաւէտ այդ մարդը», մտնում է ամիրապետի մօտ (*«Իսկ նորա զաւարտահասակ դիտակն իւր եւս առաւել փայլուն եւ պաղպաջուն զգեստուք պճնաւորեալ՝ եւ զաղէբեկ ծաղկեալ մօրուսն ոսկեփունջ կազմեալ, եւ զոսկինկար գաւազանն, որ 'ի փայտից ոպնիազից՝ 'ի ձեռն առեալ, այնպէս ապա գունեան այրն եւ թիկնաւէտ առ ամիրապետն մտանէր»*)[19]:

Արաբ ամիրապետին հաճոյ չի թւում Օձնեցու՝ արտաքին շքեղութեան ձգտումը: Սակայն երբ նրանք երկուսով առանձնանում են, Օձնեցին հանում է իր դրսի հագուստը եւ ցոյց տալիս այծամազէ ցփսին՝ ասելով. *«Մերկութեան անդամոցս ա՛յս է զգեստ. իսկ արտաքոյքդ միայն են 'ի տեսիլ արտաքնոց»*: Ամիրապետը ձեռքով հպւում է ցփսիին եւ խոժոռուելով ու քստմնելով ասում. *«Զիա՞րդ արդեօք կարէ մարմին մարդոյ տեւել ժուժկալել այսպիսի դժոխըմբերելի քրձի, եթէ ոչ յԱստուծոյ տուեալ լինի նմա համբերութիւն»*: Ապա ամիրապետը մեծարում է Օձնեցուն, *«եօթ անգամ նրան պճնազարդելով արքունական գեղեցիկ զգեստով*[20] *եւ ոսկու ու արծաթի գանձեր նրան պարգեւելով»*՝ ուղարկում է Հայաստան: Գալով հայրենիք՝

---

[17] *Վլիթ* անուանաձեւը պէտք է արաբ. ولِيد *Վալիդ* անուան մի տարբերակը լինէր (Տեր-Գեւոնդեան, էջ 82): Ըստ Քաջբերունու ենթադրութեան՝ իր գրառած տարբերակում Վլիթ ոստիկանը դարձել է *Ալի* (Քաջբերունի, էջ 86), որն Օձնեցու հետ Հայաստան եկած արաբական զօրքերի հրամանատարն էր (տե՛ս վարը):

[18] Ըստ Վարդան Պատմիչի՝ արաբ բարձրատոհմիկ պաշտօնեաները յաճախ մասնակցում էին եկեղեցական տօնախմբութիւններին, որոնց ընթացքում բազմիցս տեսել էին Օձնեցուն եւ նրա մասին բարեխօսել Օմար ամիրապետին (տե՛ս՝ ստորեւ) (Վարդան Արեւելցի, «Ճառ ի վերայ Յոհան Օձնեցւոյ ըստ խնդրոյ Համազասպ եպիսկոպոսի Հաղբատայ», *Արարատ*, 10:1888, էջ 584):

[19] *Յովհաննու Կաթողիկոսի…*, էջ 105-7:

[20] Դրասխանակերտցու պատումի եօթ անգամ պճնազարդելը (կամ ըստ Ասողիկի՝ եօթը հանդերձ ընծայելը) Վարդան Արեւելցին նկարագրում է այսպէս. *«եւ եօթն անգամ ագուցեալ զնա յարքունական եւ ի մեծածախ հանդերձից, առաքէ զնա յաշխարհս մեր երեւելի փառօք…»* (Վարդան Արեւելցի, էջ 586):

Օձնեցին տասնմէկ տարի նստում է հայրապետական աթոռին եւ վախճանում. *«Որոյ եկեալ եւ կեցեալ ամս սակաւ՝ վախճանի, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս մեփասան»*[21]: Դրասխանակերտցին ոչինչ չի գրում բիւզանդացիների եւ քաղկեդոնականութեան դէմ Օձնեցու մղած պայքարի մասին, որին անդրադառնում են մեր միւս պատմագիրները:

ՕՁՆԵՑՈՒ ԿԵՐՊԱՐՆ ԸՍՏ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ

Դրասխանակերտցուց յետոյ՝ Օձնեցու կեանքի եւ գործունէութեան մասին հիմնական սկզբնաղբիւրներից մէկը Կիրակոս Գանձակեցու (1203-71) *Հայոց պատմութիւն*ն է[22], որը հետաքրքրական եւ բաւական ընդարձակ տեղեկութիւններ է հաղորդում նաեւ Օձնեցու հայաստանեան գործունէութեան մասին: Օձնեցու՝ արաբների ամիրապետի «դուռը» մեկնելուն առնչուող դէպքերի նկարագրութիւնը տալիս՝ Գանձակեցին նշում է. *«Իսկ յետ տեառն Եղիայի առնու զկաթողիկոսութիւնն տէր Յովհաննէս Օձնեցի: Սա էր այր իմաստասէր եւ սուրբ, եւ վայելուչ հասակաւ մարմնոյն, եւ հոգւովն եւս առաւել գեղեցիկ: Զսա կոչեաց Հէշմ ի դուռն իւր, եւ վասն վայելչութեան երեսաց նորա մեծապէս պատուեաց զնա. քանզի խարտեալ զոսկի եւ արկեալ զմօրուօք իւրովք՝ եմուտ առ նա»*[23]: Այսպիսով, ի տարբերութիւն Դրասխանակերտցու, որն անուանապէս չի յիշատակում արաբ ամիրապետին, Գանձակեցին նշում է նրա անունը՝ Հեշմ: Այլ պատմագիրներ, սակայն, այլ անունով են յիշում Օձնեցուն իր մօտ հրաւիրած արաբ ամիրապետին:

Գանձակեցին փոքր-ինչ այլ բառերով է մէջբերում Հեշմի եւ Օձնեցու միջեւ տեղի ունեցած երկխօսութիւնը: Հայագէտ Կարապետ Մելիք-Օհանջանեանը, Գանձակեցու աշխատութեան քննական բնագրի առաջաբանում նշում է, որ Գանձակեցին մեծապէս արժեւորել եւ օգտագործել է բանաւոր աղբիւրը՝ ժողովրդական աւանդազրոյցները, ականատեսների եւ ականջալուրների պատմածները: Նա իրաւամբ ենթադրում է, որ Օձնեցու մասին Գանձակեցու հաղորդած աւանդազրոյցները վերաբերում են «եկեղեցական զրոյցներ»ին կամ «կրօնա-ժողովրդական մանրապատումներ»ին[24]: Ըստ երեւոյթին, Գանձակեցուց առաջ Դրասխանակերտցին նոյնպէս անկախաբար օգտուել է ժողովրդական բանահիւսական կամ եկեղեցական գրաւոր աւանդապատումներից:

---

[21] *Յովհաննու Կաթողիկոսի…*, էջ 106-107:

[22] Դրասխանակերտցուց (Ժ.դ.) յետոյ եւ Գանձակեցուց առաջ՝ Օձնեցու մասին տեղեկութիւններ են հաղորդում նաեւ Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը (ԺԱ.դ.) եւ Միքայէլ Ասորին (ԺԲ.դ.), որոնք յատկապէս մանրամասնօրէն նկարագրում են Օձնեցու դաւանաբանական գործունէութիւնը (Պապեան, էջ 9-10):

[23] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց,* աշխատ.՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 67:

[24] Գանձակեցի, էջ ԽԹ, ԾԱ:

Համեմատելով Գանձակեցու եւ Դրասխանակերտցու պատումները Օձնեցու մասին՝ տեսնում ենք, որ դրանց ընդհանուր իմաստը եւ շեշտադրումները երկու պատմագիրների մօտ գրեթէ նոյնական են՝ չհաշուած որոշ նրբերանգներ: Հեշմի այն հարցումին, թէ՝ «Ձեր Քրիստոսի մասին ասում են, թէ չափազանց հեզ էր ու խոնարհ եւ աղքատութիւնը աւելի էր սիրում: … Իսկ դու ինչու՞ ես այդպէս զարդարուել»[25], Օձնեցին պատասխանում է. «*Դու քո ծառաներից աւելի ոչինչ չունես, բացի միայն թագաւորական թագից ու հանդերձանքից. դրա համար վախենում են քեզանից ու մեծարում են քեզ: Մեր առաջին հայրերը հրաշագործներ ու վարքով սքանչելի էին, դրա պատճառով՝ նրանց ձեռքի տակ գտնուողները երկիւղում էին նրանցից ու նրանց հրամանները դողահար կատարում: Իսկ մենք այդպիսիք չենք, այդ պատճառով՝ հանդերձներով ու զարդերով զարդարւում ենք, որպէսզի մեր հրամանները չանտեսուեն*»[26]: Այս ասելով՝ Օձնեցին բացում է իր կուրծքը եւ ցոյց տալիս այն մազեղէն հագուստը, որ կրում էր տակից[27]:

Օձնեցու այս համեստ պահուածքն ու շիտակ խօսքերն այնքան են ազդում ամիրապետի վրայ, որ նա մեծարում ու պատիւների է արժանացնում նրան: Նաեւ՝ երաշխիք է տալիս, որ քրիստոնեաները հարկերից կ'ազատուեն եւ ամէնուրեք ազատ կը կարողանան կատարել իրենց հոգեւոր պաշտամունքը, եւ ոչ ոք չի ստիպի նրանց ուրանալ իրենց հաւատը, դրա փոխարէն՝ հայ ազգը քաղաքական առումով կ'ենթարկուի իրեն: Հեշմն իր մատանիով կնքում է այս համաձայնագիրը եւ մեծ պարգեւներով ու զօրքով Օձնեցուն յետ է ուղարկում Հայոց Աշխարհ: Այնուհետեւ հայոց կաթողիկոսը արաբների օժանդակութեամբ Հայաստանից հալածում է բոլոր բիւզանդացիներին՝ «թէ՛ վերակացուներին, թէ՛ զինուորներին», եւ դրա շնորհիւ կարողանում է արդիւնաւէտ պայքարել քաղկեդոնականութեան դէմ ու վերահաստատել Գրիգոր Լուսաւորչի սահմանած տօները: Հետաքրքիր է, որ Օձնեցին սահմանում է նաեւ Դաւիթ մարգարէի ու Յակոբ առաքեալի տօները Դեկտեմբերի 25ին, երբ *«այլ ազգերը Տիրոջ ծննդեանն են տօնում…»*[28]: Ինչպէս տեսնում ենք, Օձնեցին լրջօրէն զբաղուել է հայոց եկեղեցական տօնացոյցի կանոնակարգմամբ[29]:

---

[25] Նոյն, էջ 67. նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, *Հայոց պատմութիւն*, աշխատ.՝ Վ. Առաքելեան, «Սովետական գրող», Երեւան, 1982, էջ 59:

[26] Նոյն, էջ 60. նաեւ՝ Գանձակեցի 1961, էջ 67-68:

[27] Գանձակեցի 1961, էջ 68:

[28] Գանձակեցի 1982, էջ 60-61. նաեւ՝ Գանձակեցի 1961, էջ 69:

[29] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Ռ.Հ. Վարդանեան, «Յովհան Օձնեցու արմատական բարեփոխումները հայոց ճաշոց-տօնացոյցում», *Հայոց տօնացոյցը (4-18րդ դարեր)*, «Գիտութիւն», Երեւան, 1999, էջ 198-99, 206. նաեւ՝ Մ. Յակոբեան, «Սուրբ Յովհան Օձնեցի հայոց հայրապետի կանոնական եւ իրաւագիտական ժառանգութիւնը», *Էջմիածին*, 2009:Ա, էջ 40-41. նաեւ՝ Լ.Ա. Սարգսեան, *Հայոց*

Կարծիք կայ, թէ «Յովհան Օձնեցի եւ Հեշմ» աւանդազրոյցը վիպական անդրադարձն է այն պատմական իրողութեան, որ 652ին Թէոդորոս Ռշտունին յատուկ պայմանագիր է կնքում արաբ խալիֆ Մուաւիայի հետ, որի համաձայն՝ եթէ որեւէ թշնամի պետութիւն (նկատի էր առնուած յատկապէս Բիւզանդիան) յարձակուէր Հայաստանի վրայ, խալիֆաթը պարտաւորւում էր զօրքով անմիջապէս օգնութեան հասնելու նրան[30]: Իրականում նման ենթադրութիւն անելն անիմաստ է, եթէ հաշուի առնենք, որ Օձնեցու եւ արաբ ամիրապետի հանդիպումը իրական պատմական փաստ է:

ՕՁՆԵՑՈՒ ԿԵՐՊԱՐՆ ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑՈՒ

Վարդան Արեւելցի պատմագիրը (ԺԳ. դար) յատուկ աշխատանք ունի գրած Յովհան Օձնեցու մասին, որը կոչւում է «Ճառ ի վերայ Յոհան Օձնեցւոյ»: Այս երկում Օձնեցին կոչւում է Հայրապետ Յովհան *Ուձնեցի*: Ճառի մէջ Վարդան պատմագիրը խօսում է Օձնեցու եկեղեցաշինական գործունէութեան մասին. *«Շինէր եւ ինքն ի բազում տեղիս եկեղեցիս որպէս եւ յիւրականն աւանի զերկնանմանն խորան, բարի առնելով տանն իւրոյ եւ ընտանեաց, որպէս դայեկաց եւ առաջին խանձարրաց...»*[31]: Եթէ Յովհաննէս Դրասխանակերտցին ընդհանուր գծերով խօսում է լոկ Օձնեցու կողմից եկեղեցու անշունչ քարերը պճնազարդելու մասին, այնուհետեւ՝ Կիրակոս Գանձակեցին յիշատակում է Օձնեցու կառուցած միայն մէկ եկեղեցին Օձունում, ապա Վարդան պատմիչը նշում է միքանիսի մասին, որոնց թւում եւ՝ իր սեփական աւանի (Օձունի) տաճարը (*«որպէս եւ յիրականն աւանի»*): Ուշագրաւ է նաեւ, որ Վարդան Արեւելցին նախ դնում է Օձնեցու եկեղեցաշինական գործունէութիւնը, յետոյ միայն նրա այցը առ արաբ ամիրապետը (ճիշտ ինչպէս Դրասխանակերտցին է նախ պատմում «եկեղեցազարդ» գործերի, յետոյ՝ արքունական քաղաքն այցելելու մասին), մինչդեռ Գանձակեցու պատմական շարադրանքում հակառակն է՝ ամիրապետ Հեշմի հետ հանդիպումից յետոյ է միայն, որ Օձնեցին կառուցում է Օձունի եկեղեցին:

Պատմական անհամաձայնութիւն կայ նաեւ արաբ ամիրապետի անձի շուրջ: Կիրակոս Գանձակեցին նրան կոչում է Հէշմ, մինչդեռ Վարդան Արեւելցին՝ Օմար[32] (իսկ Յովհաննէս Դրասխանակերտցին ընդհանրապէս ո-

---

տօնացոյցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դդ.), «Էդիթ Պրինտ», Երեւան, 2010, էջ 260-65:

[30] Գանձակեցի 1982, էջ 60-1, ծան.:

[31] Վարդան Արեւելցի, էջ 584:

[32] Այդպիսով, ըստ հայ պատմագիրների՝ Օձնեցու այցը Դամասկոս տեղի է ունեցել կա՛մ Օմայեան Օմար իբն Աբդ ալԱզիզ խալիֆայի (717-20), կա՛մ էլ Հեշմ/Հիշամ (724-43) խալիֆայի օրօք (Միքայէլեան, էջ 27): Տէրղեւոնդեանը հակուած էր Օմար Բ. (717-20)ի օգտին՝ գտնելով, որ Հիշամի օրօք անհաւանական կը լինէր այդ այցը (Тер-Гевондян, էջ 83, ծնթ. 47):

ռեւէ անուն չի նշում[33]): Այդպիսով, ըստ միջնադարեան հայ պատմագիրների՝ Յովհան Օձնեցու այցը Դամասկոս տեղի է ունեցել կա՛մ Օմայեան Օմար իբն Աբդ ալ-Ազիզ խալիֆայի (717-20), կա՛մ էլ Հէշմ/Հիշամ (724-43) խալիֆայի օրօք[34]: Տէրոդեւոնդեանը հակուած էր Օմար Բ. (717-20) խալիֆայի օգտին՝ գտնելով, որ Հիշամի օրօք անհաւանական կլինէր այդ այցը[35]:

Վարդան Արեւելցին այսպէս է տալիս պատմական դէպքերի նկարագրութիւնը.-եկեղեցիներ կառուցելուց յետոյ Օձնեցին մեծ շուքով կրօնական տօնախմբութիւններ էր կազմակերպում Հայաստանի տարբեր վայրերում, հաւաքում էր երկրի իշխաններին՝ աշխարհախումբ բազմութեամբ, *«եւ նոքօք կատարէր զլուսաբեր աւուրսն՝ զարդարելով զգեղեցկադիտակ հասակն հայրապետական զգեստիւք եւ խնդութեան աւուրսն առ ի ցնծութիւն եւ ի պարծանս փառաց տօնասէր եւ Քրիստոսասէր ժողովրդեանն, ուր եւ հաւաքէին եւս ի տաճիկ* [= արաբ] *տոհմէ բազումք, եւ յաւագ արանց եւ ի զօրագլխոց որք եւ զարմացեալ հիանային եղեալ ձեռն ի ծնօտի, երանի տալով աշխարհին, որ այսպիսի ունիցի առաջնորդ»*[36]: Ահա այս արաբ իշխանաւորներն ու զօրապետերը, որ «ձեռքները ծնօտներին դրած», այսինքն՝ բերանները բաց ապշահար հիացմունքով տեսել ու լսել էին Օձնեցուն, նրա մասին գնում-պատմում են Օմար ամիրապետին, որին Վարդանը կոչում է «աշխարհակալ սուլթան Օմար»[37]: Ըստ Վարդան Արեւելցու՝ *«Որք* (արաբ մեծատոհմիկները - Տ.Դ.) *եւ գնացեալ առ աշխարհակալ սուլթանն Օմար, գովէին առնա զայրն փառաւոր, որպէս թէ չէ տեսեալ ակն մարդոյ, այնպիսի գեղեցիկ որդի յԱդամայն տոհմէ»*[38]: Դրանից յետոյ է, որ Օմարը ցանկութիւն է յայտնում տեսակցելու Օձնեցուն, եւ վերջինս մեկնում է արաբների մայրաքաղաքը:

Վարդան Արեւելցին Օձնեցուն համեմատում է Գրիգոր Լուսաւորչի հետ: Այս վիպաբանական բաղդատութեամբ՝ ստորգետնեայ վիհի մէջ մտնելն այլաբանօրէն զուգադրւում է Հայկական Լեռնաշխարհից դէպի հարաւ՝ դաշտավայրային երկրներ իջնելու հետ: Ըստ Ագաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսաւորիչը ստորգետնեայ զնդանում մնում է օձերի ու կարիճների ընկերակցութեան մէջ, իսկ Յովհան Օձնեցին, մեկնելով հարաւ, դիւանագիտական յարաբերութիւնների մէջ է մտնում «օձաբարոյ» արաբների հետ. *«եւ լուսաւորիչն մեր ի մէջ օձիցն եւ նա ի մէջ թշնամեացն օձաբարոյ եւ չար-*

---

[33] Դրասխանակերտցու նման՝ արաբ ամիրապետի անունը չեն նշում նաեւ Ասողիկը եւ Սամուէլ Անեցին (Тер-Гевондян, էջ 83, ком. 47):

[34] Միքայէլեան, էջ 27:

[35] Тер-Гевондян, էջ 83, ծնթ. 47:

[36] Վարդան Արեւելցի 1888, էջ 584:

[37] Արաբ. سلطان «իշխանութիւն», «տիրակալ» բառը, հենց Վարդանի նոյն երկում տառադարձւում է մե՛րթ **թ**ով, մե՛րթ **տ**ով՝ սուլթան/սուլտան:

[38] Վարդան Արեւելցի 1888, էջ 584:

չարիչ նենգաւոր ազգին իսմայէլի. զանձն եդեալ ի վերայ հօտին իբրեւ զհովիւն քաջ»[39]:

Ըստ Վարդան Արեւելցու՝ Յովհան Օձնեցին արաբ ամիրապետ Օմարի պալատ է մտնում հանդիսաւոր կերպով, գլխին՝ ճերմակ քող ունեցող վարսակալ-թագ, ձեռքին՝ խաչանշան գաւազան[40]. Վարդան Արեւելցու խօսքով՝ *«…զգենոյր զպճղնաւորն եւ ի վերայ զվակաս եմիփորոնին, եւ զքողն ծիւնափայլն վարսակալ պսակովն դնէր ի գլուխն եւ մտանէր յարքունիսն. զինեալ խաչանշոյլ եւ ականակուռ գաւազանաւն, զոր իբրեւ տեսանէր արքայն արքայից ահիւ եւ դողութեամբ լնոյր, եւ քսփմնեալ սոսկայր յոտից մինչեւ ցծայր հերացն, եւ ծածկեալ զերեսն հազիւ կարէր պահել զուշ խելացն, առ ժամանակ մի լռութիւն կալեալ զպալատն արքունի, ապա սրտապնդեալ զինքն սուլտանն բանայր զերեսն իւր եւ հարցանէր…»*[41]: Այսպիսով, միայն որոշակի ժամանակամիջոցից յետոյ է յաջողւում այլայլուած դողահար Օմարին ուշքի գալ եւ հարց ուղղել Օձնեցուն:

Դրանից յետոյ գրեթէ նոյն երկխօսութիւնն է տեղի ունենում, ինչ որ նախորդ աղբիւրներում արդէն նկարագրուած է: Արդիւնքում Օձնեցին Օմարին ցոյց է տալիս իր տակի հագուստը. *«եւ նոյն ժամայն արտաքս հանեալ զամենեսեան, տեսանէր ի ներքս զտատասկաձեւ գլգլեակն եւ անկեալ յերեսս ողջունէր զնա, եւ շօշափմամբ ձեռաց գանձէր յինքն օրհնութիւն ի նմանէ»*: Այնուհետեւ Օմարը հրամայում է կանչել իր զօրքերում եղած բոլոր հիւանդներին («նեղեալներին»), որոնց Օձնեցին իսկոյն բժշկում է: Օմարը խոստանում է որդիաբար կատարել ամէն բան, ինչ որ հաճոյ է Օձնեցուն: Վերջինս օգնական զօրքեր է խնդրում, որից յետոյ Օմարը *«նորա խնդութեամբ հրաման տուեալ եւ ձեռագրով կնքեալ եւ տուեալ զօրագլուխս յօգնականութիւն, եւ եօթն անգամ ագուցեալ զնա յարքունական եւ ի մեծածախ հանդերձից, առաքէ զնա յաշխարհս մեր երեւելի փառօք եւ բազում դրուատիւք պսակեալ ի յաշխարհակալ գոռոզէն…»*: Օձնեցին վերադառնում է Հայաստան եւ Սմբատ Կիւրոպաղատի ու արաբների զօրագնդերի միջոցով դուրս է մղում բիւզանդացիներին «ի վերին աշխարհէն Հայոց»[42]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Փաստօրէն, յենուելով հին ու նոր աղբիւրների տեղեկութիւնների վրայ, կարելի է վստահօրէն եզրակացնել, որ միջնադարում գոյութիւն է ունեցել Յովհան Օձնեցուն վերաբերող մի վիպաշար, որի առանցքային դրուագներից էր «Յովհան Օձնեցի եւ արաբ ամիրապետ» պատումը՝ վկայուած հիմ-

---

[39] Նոյն, էջ 585:

[40] Այս խաչանշան գաւազանը կարեւոր դեր է խաղում Օձնեցու վիպական կերպարի ձեւաւորման մէջ:

[41] Վարդան Արեւելցի 1888, էջ 585:

[42] Նոյն, էջ 585-586:

նականում Դրասխանակերտցու, Գանձակեցու եւ Արեւելցու պատմական շարադրանքներում: Այս վիպական դրուագի ձեւափոխուած եւ երբեմն նոր ժամանակների իրողութիւններին յարմարեցուած տարբերակներ են գրի առել ազգագրագէտ Լալայեանը[43], գրող եւ բժիշկ Տէր-Յովհաննիսեանը[44], բանագէտ Հայկունին[45]: Վերջինիս տարբերակն, ի տարբերութիւն առաջին երկուսի, գրի է առնուած տեղական բարբառով (Բզնունիք գաւառում), բանասացի մասին հակիրճ տեղեկատուութեամբ: Լալայեանի գրառած տարբերակում Հեշմ կամ Օմար անունով ամիրապետերի փոխարէն հանդէս է գալիս *Բաղդադի խալիֆան*, չնայած որ պատմականօրէն Օձնեցու հանդիպումը Արաբական Տէրութեան խալիֆայի հետ տեղի է ունեցել մայրաքաղաք Դամասկոսում[46]: Լալայեանի պատումին հակառակ՝ Հայկունու տարբերակում Օձնեցու եւ մուսուլման տիրակալի հանդիպումը տեղի է ունենում նոյնպէս Սիրիայում[47]:

Եթէ վիպաբանական վերլուծութիւնից շեղուելով՝ հպանցիկ պատմագիտական հայեացք նետենք, մասնաւորաբար, Գանձակեցու պատմական նկարագրութեանը, ապա կարելի է նշել, որ, փաստօրէն, քաղաքական անկախութեան բացակայութեան պայմաններում՝ Հայաստանն Օձնեցու օրօք ձեռք բերեց կրօնական անկախութիւն, եւ դրա շնորհիւ՝ երկրի իրական իշխանութիւնը կենտրոնացաւ հենց կաթողիկոսի ձեռքում:

Վերջինս, երկիրը կարգաւորելուց յետոյ, ըստ Գանձակեցու, սկսում է զբաղուել «ուսուցչութեամբ ու աղօթքներով». *«Եւ այսպէս կարգաւորեալ զաշխարհս ամենայն առաքինութեամբ, եւ ինքն վարդապետութեան եւ աղօթից պարապեալ: Շինէ եւ եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձուն, որ հուպ է առ քաղաքն Լօռէ, եւ իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ անդ դադարէր»*[48]: ԺԸ. դարասկզբին Ստեփանոս Ռօշքան իր եկեղեցական ժամանակագրութեան մէջ գրում է. *«Տէր Յոհան ի Տաշրաց, ի գեղջէն Օձնոյ, ամս Ժ»*[49]: Իր հայրենի Օձուն աւանում Օձնեցու կառուցած եկեղեցին «երկնանման խորան» է անուանում Վարդան պատմագիրը[50]:

---

[43] Լալայեան, էջ 176. Նաեւ՝ Ա.Տ. Ղանալանեան, *Աւանդապատում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 305 (№ 773 Դ):

[44] Քաջբերունի, էջ 84:

[45] «Օխան Օձնելի», գրի է առել՝ Ս. Հայկունի, պատմել է Խլաթայ Փրխուս գիւղից Քրսեցի Արեւշատ (Սարիբէկ), *Արարատ*, Սեպտեմբեր, Թ:1898, էջ 412:

[46] Тер-Гевондян, էջ 83: Այդուհանդերձ, ո՛չ Դրասխանակերտցին, ո՛չ Գանձակեցին, ո՛չ էլ Վարդան Արեւելցին քաղաքի անունը չեն նշում:

[47] «Օխան Օձնելի», էջ 413:

[48] Գանձակեցի 1961, էջ 69-70:

[49] Ստեփանոս Ռօշքայ, *Ժամանակագրութիւն կամ փարեկանք եկեղեցականք*, հրատ.՝ Հ. Համազասպ Ոսկեան, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1964, էջ 86:

[50] Վարդան Արեւելցի 1888, էջ 584:

Այսպիսով, հայոց պատմական աւանդութիւնը, սկսած Գանձակեցուց, ասում է, որ իր հայրենի Օձուն գիւղում Յովհան Իմաստասէր կաթողիկոսը մեծ եկեղեցի է կառուցել: Տարօրինակ է, սակայն, որ աւելի քան հինգ դարերի ընթացքում՝ ընդհուպ մինչեւ Գանձակեցու ժամանակը, որեւէ տեղեկութիւն չունենք՝ Օձնեցու կողմից եկեղեցի կառուցելու վերաբերեալ: Ընդսմին, սա կարող է ունենալ այլեւայլ պատմագիտական եւ մատենագրական բացատրութիւններ, որոնց քննութիւնը դուրս է ներկայ յօդուածի շրջանակից[51]:

HISTORIOGRAPHICAL-FOLKLORISTIC NARRATIVES ABOUT CATHOLICOS HOVHAN ODZNETSI (RESEARCH OF SOURCES)

(Summary)

TORK DALALYAN (torqdal@yahoo.com)

In the Middle Ages, starting from the 10th c., several Armenian historiographers, such as Hovhannes Draskhanakerttsi, Kirakos Gandzaketsi, and Vardan Areveltsi, communicated valuable information concerning Armenian Catholicos Hovhan Odznetsi (717-728 AD). The central episode of the Catholicos's activity was his meeting with the Arab Caliph in the capital of the Caliphate. This episode was described in an epic manner. In our days, the epic image of Hovhan Odznetsi has been studied by Yervand Lalayan, Tamar Gevorgyan, Astghik Israyelyan, Lilit Simonyan and others. The epic image of an historical person is usually formed according to mythological rules; however, the real life of this person naturally lies at the base of epic narratives. Our paper examines the epic narratives about Hovhan Odznetsi which describe his political-administrative activity, with the exception of the topographical-religious legends preserved in his native village of Odzoun and in its surroundings.

[51] Օձունի եկեղեցու թուագրման ժամանակի վերաբերեալ առկայ գիտական քննարկումների մասին տե՛ս՝ Դալալեան, էջ 317-19: